

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՓԵՏՐՎԱՐԻ 15-ԻՑ ՄԻՆՉԵՎ ՄԱՐՏԻ 5-Ը ՆԵՐԱՌՅԱԼ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ ԵՆ ԱՌԿԱ
ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ՝ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ՄԱՍՆԱԿԻ
ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ՝ ԶԵՂԶԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԸ

ԶԵՂԶԻ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ՝ 306 ՍԵՆՅԱԿ

ԿԱՄ

ՈՒՂԱՐԿԵԼ ՀԵՏԵՎՅԱԼ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՓՈՍՏԻ ՀԱՍՑԵԻՆ

bryusov.yndhanurbajin@gmail.com

ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ՄԱՍՆԱԿԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹՂԵՐԻ ՑԱՆԿ

- **սոցիալապես անապահով** – անձնագրի պատճեն, անապահովության տեղեկանք, տեղականք բնակության վայրից /տեղեկանքում պարտադիր պետք է նշված լինի ընտանիքի կազմը/, նախորդ տարվա ՄՈԳ-ը (բացառությամբ 1-ին կուրսի ուսանողների)
- **սահմանամերձ համայնքի բնակիչ** - անձնագրի պատճեն, տեղեկանք բնակության վայրից (տեղեկանքում պարտադիր պետք է նշված լինեն, որ վերջին 5 տարում բնակվել է տվյալ հասցեում և ընտանիքի կազմը), ատեստատ, նախորդ տարվա ՄՈԳ-ը (բացառությամբ 1-ին կուրսի ուսանողների)
- **23 տարին չլրացած 18 տարին լրանալուց հետո առանց ծնողական խնամքի մնացած երեխա** – անձնագրի պատճեն (գրանցման էջը պարտադիր է), ծնողի անձնագրի պատճեն, մահվան վկայականի պատճեն կամ ՔԱԿԳ-ից համապատասխան տեղեկանք, ծննդյան վկայականի պատճեն, ՄՈԳ
- **23 տարին չլրացած միակողմանի ծնողազուրկ /միածնող/** – անձնագրի պատճեն (գրանցման էջը պարտադիր է), ծնողի անձնագրի պատճեն, ծննդյան վկայականի պատճեն, մահվան վկայականի պատճեն կամ ՔԱԿԳ-ից համապատասխան տեղեկանք, ՄՈԳ
- **3 և ավելի անչափահաս կամ 3 և ավելի ուսանող երեխաներ ունեցող ընտանիքի անդամ** - անձնագրերի պատճեններ (գրանցման էջը պարտադիր է), ծննդյան վկայականների պատճեններ կամ բուհերից տեղեկանքներ, ՄՈԳ
- **1-ին կամ 2-րդ խմբերի հաշմանդամ ծնողի երեխա** – անձնագրերի պատճեններ (գրանցման էջը պարտադիր է), ծննդյան վկայականի պատճեն, հաշմանդամության տեղեկանք, ՄՈԳ
- **մինչև մեկ տարեկան երեխայի ծնող** - անձնագրի պատճեն (գրանցման էջը պարտադիր է), երեխայի ծննդյան վկայականի պատճեն, ՄՈԳ
- **մարտական հերթապահություն իրականացնող զորամասում մարտական հերթապահության մեջ ընդգրկված պարտադիր զինվորական ծառայություն անցած ուսանող** - անձնագրի պատճեն(գրանցման էջը պարտադիր է), զինվորական գրքույկի 1-ին և մարտական հերթապահության էջերի պատճեն, ՄՈԳ
- **բարձր առաջադիմություն** – անձնագրի պատճեն (գրանցման էջը պարտադիր է), ՄՈԳ
- **այլ կարգավիճակ** - անձնագրի պատճեն (գրանցման էջը պարտադիր է), ՄՈԳ, համապատասխան կարգավիճակը հաստատող փաստաթղթեր